

Հ Ա Շ Ի Ի

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ

— ՆԱԽԻՅԵԼԱՆԻ ՎԱՍՆ 1870 ՍՄԻ

Նոր—Նախիջևանի Հայոց Մարդասիրական Ընկերութեան Խորհրդարանը՝ Ընկերութեան անցեալ 1870 տարւոյ մէջ ունեցած մուտքն և որպէս ժառանգաւորաց դպրոցին, նոյնպէս և խորհրդարանի համար արած ծախքն բացատրելէն առաջ, հարկ կհամարէ յիշատակել իւր այս հաշուին մէջ որ խորհրդարանի Հոգաբարձուները տեսնելով անցեալ տարւոյ մէջ մէկ կողմանէ՝ ժառանգաւորաց դպրոցի մէջ կանոնաւոր դասատուութիւնը և աշակերտաց յառաջադիմութիւնը և միւս կողմանէ՝ Նոր—Նախիջևանի քանի մի պատուաւոր քաղաքացւոց իրենց որդիքը նոյն դպրոցը յաշակերտութիւն տալու ցանկութիւնը, առանձին յայտարարութեամբ զիմելով առ Ա. հաստատ Հայրապետն ազգիս խնդրեաց Նորին բոլորհաճութիւնը ժառանգաւորաց դպրոցին մէջ թոշակաւոր աշակերտներ ընդունելու, առ որ և Նորին Ա. հաստատութիւնն կոնդակաւ յ3 Մարտի անցեալ ամի ընդ համարաւ 58 բարեհաճեցաւ թոյլատրել, որով և Խորհրդարանի Հոգաբարձուաց կարգադրութեամբ ընդունուեցան այն դպրոցին մէջ տասն թոշակաւոր աշակերտք, որոց տարեկան թոշակն սահմանուած էր առաջին անգամ 120 ուրլի արծաթ, բայց յետոյ խորհրդարանս տեսնելով որ իւրաքանչիւր աշակերտ դպրոցին ունի ծախս մինչ ց150 ուրլի արծաթ հաճութեամբ ծնողաց նոցին յաւելցուց թոշակն հասցնելով ց150 ուրլի արծաթ, իսկ պատճառաւ խորհրդարանս հարկադրուեցաւ վարձել լաւ վարժապետներ, բաւական նշանաւոր գնով, որք մինչև ցայժմ՝ կշարունակեն իրենց դասատուութիւնը իւրաքանչիւրն իւր առարկային մէջ, կանոնաւոր եղանակաւ, և դպրոցն յառաջ ընթանալով յամենայն կողմանէ՝ իրեն կանոնաց համաձայն օրէօր կդարգանայ և աշակերտաց յառաջադիմութիւնը օրէօր կաւելնայ:

Ինչպէս որ կտեսնուի Ընկերութեանս 1869 ամի հաշուէն և նոյն իսկ հաշուամատենէն անցեալ 1870 ամի սկիզբը Ընկերութիւնս ունէր:

— Բ. Կ.

ա. Տասն տոմսակ. ք. ա. ներքին փոխառնութեան ի գումար	1300
բ. Զորս Բանրական տոմսակ. ք.	400
գ. Պատրաստի գումար դրամոց.	3754 55
Նոյն տարւոյ մէջ Ընկերութեան մուտքն են.	
ա. Ի 170 անդամոց տարեկան բաժնորդացին յիւրաքանչիւրոյ վեց բ.	1020
բ. Համաձայն կարգադրութեան Սըրբազան Առաջնորդի վիճակիս Տ. Գէորգայ Երբ Եպիսկոպոսի ընդունուել է ի կառավարչէ վանուց սրբոյ Խաչի, ի մեծարոյ Գէորգայ Խաթրանեանց, վարն սննդեան ձրիավարժ աշակերտաց ժառանգաւորաց դպրոցին	600
գ. Ի տասն թոշակաւոր աշակերտաց ընդունուել է ութն ամսեայ թոշակ սկսեալ ի միոյ Մայիսի 1870 ամի ցմին Յունւարի 1871 ամի	800
դ. Ի նոյն թոշակաւոր աշակերտաց ընդունուել է ի գին դրենոյ ի պէտս նոցին	48 59
ե. Ի նախիջևանցի վաճառական մեծարդոյ Նիկողայոսէ Մկրտչեան Աճնման ընդունուել է միանուագ ընկերութեան անդամոց կոչումը մշտնջենաւորապէս պահպանելու համար	120
զ. Ի չորից անդամոց ընդունուել է տարեկան բաժնորդացին վան 1869 ամի	24
է. Յերկու նախանձաւոր Տփիսեանց ցոց պայման է ի Յակովբայ Խոճայնութեանց և ի Ստեփանոսէ Գրիգորեանց ընդունուել է միանուագ	12
բ. Բանրական և ա. ներքին փոխառնութեան տոմսակաց տոկոսիք ստացուել է	70
թ. Ի պատրաստական դրամադիւնցի գոյացել է արդիւնք ընդ ձեռն անդամոց ընկերութեան, մեծարդոյ Գէորգայ Գարրիէիան Խոճայեանց	566 31
ժ. Ի յիշատակ հոգւոց հանգուցեալ Աստուածատրոյ և Մարիամու Բարեւուսեանց ընդունուել է ձեռամբ անդամոյ խորհրդարանիս Պարոն Մինասայ Եղիայեան Պալապանեանց ալ և ալ ոսկիդէն ինչք ըստ գնոյ	120
ժա. Ի յիշատակ հոգւոց հանգուցեալ Թագոյ հոյ կնոջ Պարոն Եպիսկոպոս Պոպոյեանց ընդունուել է	10
Ընդ ամեն 1870 տարւոյ մէջ ընկերութեան ունեցած արգեանց գումարն է	3420 81
Իսկ ծախք եղեալ են ի նոյն տարւոյ մէջ ա. Ըստ ուսումնական մասին ժա-	

ռանգաւորաց դպրոցին և վասն Հանդերձեղինաց աշակերտաց ծախք եղեալ են դպրոցի հոգաբարձուաց ձեռք .

1297 67

Ըստ տնտեսական մասին ժառանգաւորաց դպրոցին ծախք եղեալ են ծախսարարի ձեռք .

1323 31

դ Ընկերութեան խորհրդարանի պիտոյից համար ծախք եղեալ են գանձապահի ձեռք .

111 50

Ընդ ամէնն ծախուց գումարն եղեալ է

2732 48

Զորպիսի գումարն ծախուց ի բաց հանելով ի գումարէն մօից մնայ առ մին Յունուարի 1871 ամի.

ա. Տասն տոմսակք ա. ներքին փոխառիութեան ի գումար .

1300

բ. Զորս Բանքական տոմսակք ի գումար .

400

գ. Պատրաստի գումար դրամոց .

4442 88

Ի վերջ հաշուոյ խորհրդարանս պատիւ ունի յայտնել ի տեղեկութիւն մեծարգոյ Անդամոց ընկերութեան. նախ ժառանգաւորաց դպրոցին ուսումնական մասին և աշակերտաց հանդերձեղններուն համար եղած ծախքը 1870 տարւոյ մէջ մանրամասնաբար գրուած են դպրոցին հոգաբարձուաց ժապաւինեալ մատեններուն մէջ ուստի և խորհրդարանս կարևոր չհամարելով մանրամասնաբար տեղեկութիւն տալ այն ծախուց վերայ, պատշաճ կդատի տնտեսական ծախուց վերայ մասնաւոր յիշել որ թէպէտ խորհրդարանս կստանայ ի կառավարէն վանուց սրբաջ Խաչի ամէն ամիս յիսնական ռուբլի արծաթ աշակերտաց սննդեան համար, նոյնպէս և ալիւր և վառելիք ըստ թուոյ ձրիավարժ աշակերտաց, բայց մի և նոյն ժամանակ ընկերութիւնս կհոգայ ի միասին ընդ աշակերտաց և վանքի միարաններուն և ծառաներուն սնունդը ինչպէս որ կարգադրուած է ի Անհամատ Հայրապետէն ազգիս և Սրբազան Առաջնորդէն վիճակիս և երկրորդ ինչպէս որ խորհրդարանս հաւաստեալ տեղեկացաւ. Նոր. Նախիջևանի հանգուցեալ վաճառական մահտեսի Կարապետ Ղըլթեանի ժառանգներէն, հանգուցեալը աւանդել է յօգուտ ընկերութեան հազար ռուբլի արծաթ, զորս ժառանգներն պարտաւոր են հատուցանել երեք տարուան մէջ:

Ընդ իսկականէն համեմատ է

Ընդամ խորհրդարանի Իսկապատ-
Սպեկական

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Ժողովոյ Ընդամոյ Սարգսա-
րական Ընկերութեան է 4 Սպեկ 1871 ամի:

Ի չորս մայիսի 1871 ամի, մէք ի ներքոյ ստորագրեալքս անդամք Սարգսաիրական Ընկերութեան Հայոց Նոր. Նախիջևանի ժողովեալ ի միասին վասն վերահասու լինելոյ ընկերութեանս 1870 տարւոյ մէջ ունեցած մօից և ծախուց հաշուոյն գտաք, ա. որ ընկերութեան մատենները ի գործ դրուած են կանոնաւոր եղանակաւ ըստ պահանջման կարգին: Բ. Տասն տոմսակներն ա. ներքին փոխառիութեան ի գումար 1300 ռուբլի արծաթ. չորս բանքական ընկերութեան ի գումար 400 ռուբլի արծաթ. և ներկայ գումարն դրամոց 4442 ր. 88ք. գտանին ամբողջ առ գանձապահն ընկերութեանս: Կարգաւորեցաք. Ա. Առաջարկել հոգաբարձուաց խորհրդարանի որ ժառանգաւորաց դպրոցի և այլ կարևոր պիտոյից համար ի գործ դնեն ներկայ 1871 տարւոյ մէջ հիմնական և պատրաստական դրամագլխոց տոկոսեաց և անդամոց բաժանորդագինոց և կամաւոր նուիրումաց չորս մասին երեք մասը՝ համաձայն կանոնադրութեան ընկերութեանս. Բ. Պարոն Գեորգայ Գարբիէլեան Խօճայեանցի աշխատանաց փոխարէն, որով ի քանի տարի է շարունակ ջնջմեռանդութեամբ կշահեցընէ ընկերութեանս պատրաստական դրամագլուխը, յայտնել նմա ընդհանուր ժողովոյ անդամոց շնորհակալութիւնը: Գ. Այս կարգադրութիւնը ընդհանուր ժողովոյ հանդերձ հաշուով 1870 ամի տալ ի տպել վասն ընդհանուր տեղեկութեան:

Ընդ իսկականէն համեմատ է

Ընդամ խորհրդարանի Խ. Սպեկական

Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ Ի ՏՓԻՒՍ.

Ի 26-ն ամսոյս յաւուր Լերկուշարաթ-
ւոջ Նորին Ս. Օծութիւն վ. և հ. Կաթողիկոսն ամենայն Հայոց մեկնեցաւ ի վանուցն Սեւանայ, և ի 30-ն հասեալ է ի Տփլիս: